

(Մարքիզ) Սեղբոսեան, որ զՍարգիս բանիւ եւ գործով կը մխիթարէր ու կը քաջալերէր:

Սարգսի Կ.Պոլսէն մեկնելուն նպատակը՝ նեղութենէ փախչիլ եւ հանգիստ փնտռել չէր: Առաքելական մեծ դիտաւորութիւններ ունէր. 1. Նախ ուխտ ունէր շում երթալու Սրբոց Գլխաւոր Առաքելոց գերեզմանին, եւ Սրբազան Քահանայապետին իւր հպատակութիւնն յայտնելու: 2. Ղենետիկի մէջ յատուկ տպարան մը հաստատել կ'ուզէր ուղղափառական գրքեր տպելու եւ ազգին մէջ տարածելու համար: 3. Ղենետիկի մէջ կ'ուզէր աշխարհական վարժարան մը հաստատել, ուր հայ պատանիները ուղղափառ կրթութիւն առնելով՝ երթան իրենց բնակավայրը եւ կաթողիկէութեան քարոզիչ ըլլան: Այս դիտաւորութեանց մանրամասնութիւնը տեսնե՞ք այժմ:

Սարգիս Արքեպս. գրեթէ տարի մը Ղենետիկ մնաց՝ հաստատուած բուն քաղքին մէջ, եւ շում երթալու պատրաստութիւն տեսաւ՝ կանխաւ հրաման խնդրելով Ս. Ժողովէն: Այս նպատակաւ իւր Արքեպիսկոպոսական ձեռնագրութեան վկայականը լատիներէն թարգմանել տուաւ Մխիթար Աբրահամ մէկ աշակերտին, եւ այս եւ ապագայ առիթներով Մխիթար Աբրահամ հետ թղթակցութիւններ ունեցաւ: Այս նամակները՝ թուով ինն, կը պահուին Ղենետիկի Մխիթարեան Գեր. Հարց դիւանատունը, զորոնք տեղւոյն համեմատ յառաջ պիտի բերեմ ամբողջապէս: 28 Յունիս 1906 թուակիր նամա-